

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2004թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցի արդիականացման աշխատանքները: Ցանցին միացվել են գործող, տեխնիկական պահանջներին համապատասխանող բոլոր (թվով 150) համակարգիչները:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներում «Վինդոու-2000» սերվերի կառավարմամբ շահագործվում է դոմենային միջավայր, որն ապահովում է ցանցի կենտրոնացված կառավարում և ցանցի աշխատանքի բարձր հուսալիություն: Ներդրվել է դոմենային սերվերից կառավարվող հակավիրուսային փաթեթ: Կառուցվածքային ստորաբաժանումներում կատարվում է համակարգիչների հակավիրուսային ծրագրերի կառավարում և արդիականացում: Ներդրվել է ծրագրային փաթեթների ավտոմատ տեղակայման հնարավորություն:

ՀՀ ԱՎԾ Լոռու, Կոտայքի, Արմավիրի և Սյունիքի մարզային գործակալությունում ստեղծվել են տեղային համակարգչային ցանցեր:

Ստեղծվել է մոդեմային ժամանակակից կապ՝ Լոռու մարզային գործակալության Ստեփանավանի և Տաշիրի տարածքային ստորաբաժանումների հետ, ինչպես նաև Սյունիքի մարզային գործակալության Սիսիանի, Գորիսի և Մեղրու տարածքային ստորաբաժանումների հետ:

ՀՀ ԱՎԾ Լոռու և Սյունիքի մարզային գործակալությունները միացվել են @armstat.am փոստային սերվերին:

Ինտերնետային կապի որակի բարձրացման նպատակով տեղադրվել է արբանյակային ալեհավաքը, անցկացվել է օպտիկամանրաթելային մալուխը և տեղակայվել է համապատասխան ծրագրային ապահովումը :

Շարունակվել են վիճակագրական տվյալների մշակման, ծրագրային փաթեթների ստեղծման և տվյալների բազաների վարման աշխատանքները: Վիճակագրական տարբեր ոլորտների տվյալների ավտոմատ մշակման համար ստեղծվել են 8 նոր համալիրներ: Կատարվել են փոփոխություններ գործածվող 45 ծրագրերի մեջ:

«ԷսՔյուԷլ-2000» սերվերի վրա ստեղծվել է դասակարգիչների բազա, որը պարունակում է հետևյալ դասակարգիչները՝ բնակավայրերի, երկրների, կազմակերպա-իրավական տեսակների, գործունեության տեսակների (NACE, ISIC).

Ստեղծվել են 5 ծրագրային փաթեթներ, օգտագործելով «ԷյԷսՓի» տեխնոլոգիաները և VB 6.0 ծրագրավորման լեզուն: SERVERSQL սերվերում կատարվել է հետևյալ տեղեկատվության հավաքագրումը՝ հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ, կազմակերպության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշների

վերաբերյալ, կազմակերպության միջոցների կազմի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ:

Տվյալների հիմնապաշարների (Վերհաուզ) մշակման շրջանակներում ստեղծվել է կազմակերպության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության տվյալների համալիրի կառուցվածքը և SERVERSQL սերվերում տեղադրվել են դրա ֆակտ-աղուսյակները:

Մշակվել է ծրագրային փաթեթ (1-ավտո), որը վիճակագրական տվյալներն օպերատիվ բազաներից վերափոխում է «ԷսԶյուԷլ» սերվերի համապատասխան բազաների:

Շարունակվել են ինտերնետային և ինտրանետային հանգույցների արդիականացման աշխատանքները: www.armstat.am սայթի վրա ավելացվել է էլեկտրոնային էջի քարտեզը (Site Map): Իրականացվել է տվյալների տարածման հատուկ ստանդարտների (ԷսԴԻԴԻԷս) տվյալների բազայի կառավարում ՄայԷսԶյուԷլ (MySQL) համակարգով:

Ժամանակակից անվտանգության կանոններին համապատասխան վերատեղակայվել և հզորացվել են MsSQL ինտրանետ և արխիվային սերվերները: Ինտրանետում ստեղծվել և տեղակայվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային և տարածքային վիճակագրական ստորաբաժանումների և տեղեկատվական ռեսուրսների հաշվառման համար տվյալների բազա և դրան կառավարող էլեկտրոնային էջ: Ձևափոխվել և արդիականացվել է ինտրանետում համակարգչային տեխնիկայի անսարքությունների հետ կապված դիմում բողոքների գրանցման ծրագիրը: Ստեղծվել է վիճակագրական հրապարակումների էլեկտրոնային տարբերակների ավտոմատ ստեղծման ծրագիր: Ծրագրային ապահովման մշակման համար ինտրանետում տեղադրվել են խնդիրների դրվածքների օրինակները՝ բնակարային ֆոնդի վերաբերյալ, հետբուհական կրթության մասին, օտարերկրյա ներդրումների մասին, որոնք հեշտացնում են ԱՎԾ բաժինների տվյալների մշակման աշխատանքները:

Հրապարակումների համար, «Առ-Վյու-8» քարտեզագրական ծրագրային փաթեթի օգտագործմամբ, ստեղծվել են 81 քարտեզներ:

Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի աշխատակիցների համար անց են կացվել ԷսՊիԷսԷս (SPSS) ծրագրային փաթեթի վերաբերյալ դասընթացներ:

ԱՎԾ-ի աշխատակիցների համար անց է կացվել «Լոկալ ցանցից և համակարգչային տեխնիկայից օգտվելու կարգը» թեմայով սեմինար: